

# « 100 ՏՈԿՈՍՈՎ ՀԱՅ » ԸԼԼԱԼՈՒ ՆԱԽԱԴՊԱՅՄԱՆ՝ ՏԵՐ ՉՕՐ ԵՒ ՄԱՐԿԱՏԵ ԱՅՑԵԼԵԼ ԱՆՊԱՅՄԱՆ

Փոքր տարիքեւ, տակաւին Նախակրթարանի առաջին կարգերու նստարաններուն վրայ, միշտ լսած, խօսած եւ կարդացած եմ 1915 թուականէն սկսեալ մեր ժողովուրդի արեւմտեան թուրքիոյ մէջ գտնուող զաւակներուն, մէկ խօսքով մեր հայրերուն եւ մայրերուն գաղթականութեան, չարչարանքին ու տանջանքին, ջարդի ու սպանութեան եւ տակաւին անոնց արքայութեան, կորուստի եւ ապրած դժուարին, անտանելի եւ անմարդկային պայմաններուն մասին:

Այս նշումներուն զուգահեռ, շատ յաճախ յիշուած եւ խօսած է Տեր Չօրի մասին, սուրիական անապատին մէջ, պատմական Եփրատ գետին զոյգ ափերուն տարածուած, որ եղած է տարագիր մեր հայրերուն եւ մայրերուն իջեւանումի կայանը, անշուշտ եթէ անոնք հոն հասած են տակաւին որչ փճակով, հազարաւոր ջիւղմերը երկարութեամբ ճամբուն վրայ յոգնութենէ, անօթութենէ, ծարաւութենէ եւ ուժասպառութեան վերջին աստիճաններուն հասնելով փրկուելէ ետք: Իսկ այդ քաղաքին շրջակայ անապատը փաստօրէն եղած է մեր ժողովուրդի կարեւոր մէկ մասին անյայտ գերեզմանը, առանց թաղման արարողութեան, որուն մասին չեն ալ մտածած հաւանաբար: Եւ այս բոլորը «շնորհիւ» կողմ մը, որ կը կոչուի թուրք, իսկ այդ օրերուն օսմանեան պետութիւնը էր անոր պաշտօնական անունը:



Ուխտաւորները կ'ուղղուին Մարկատի հայկական մատուռը

Երկար տարիներ է վեր, եւ մանաւանդ Տեր Չօր քաղաքին մէջ հայոց նորակառոյց եկեղեցիի հաստատումէն եւ Մարկատ գիւղին մօտակայքը աւազներուն տակ անթիւ ու անհամար մարդկային ոսկորներ գտնուելէն եւ հայկական մատուռ մը հիմնուելէն է վեր, մեծ թիւով հայեր, ի մասնաւորի իւրաքանչիւր տարուան 24 Ապրիլի օրերուն, այցելութեան, անելի ճիշդ ուխտագնացութեան կ'երթան Տեր Չօր եւ Մարկատ, յարգելու մեր մէկուկէ միլիոն Նահատակներուն յիշատակը, ներշնչուելու անոնց Նահատակութեան ոգիէն եւ ամրապնդուելու իրենց հայրութեամբ ու արդարութեան պահանջով:

Ես միայն 60 տարիս բոլորելու ետք, Մեծ Եղեռնի յիշատակին առիթով, այս տարի առիթը ունեցայ տիկնոջ եւ շուրջ 100 հայ ուխտաւորներու հետ ուղղուելու Տեր Չօր եւ Մարկատ, ուր անցուցիք մօտաւորապէս 72 ժամեր, եւ ուրկէ վերադարձայ մեծապէս ազդուած եւ... հայկականութեամբ ու հայու հոգիով անելի զօրացած: Ահաւասիկ, Տերգօրեան ապրումներս եւ խորհումներս կը յանձնեմ թուրքին:

Հինգշաբթի, 23 Ապրիլ 2009-ի գիշերուան ժամը 9:50-ին, «Աշտուակ»-ի կազմակերպած ուխտագնացութեամբ, շուրջ 100 հայորդիներով եւ երկու օթոպիսներով ճամբայ ելանք լի-



Եկեղեցւոյ շրջափակէն ներս գտնուող յուշակոթողը եւ անոր առջեւ անմար կրակը

բանան-սուրիական սահմանին ուղղութեամբ, ուր որոշ չափով երկար տեսած ինքնուրոյն ստուգումի ձեւակերպումներէն ետք ուղղուեցանք Հոմս, Սուրիոյ մեծագոյն երրորդ քաղաքը, ապա Հիւսիսային Սուրիոյ մայրաքաղաքը, հայաշատ Հալէպ: Որոշուածին կամ յայտարարուածին համաձայն, պիտի այցելէինք քաղաքի հայ առաքելական մայր եկեղեցին՝ Ս. Զառանսից Մանկանց եկեղեցին, սեփական այցելուութեան եւ արժօքերու համար այն սրբանկարին առջեւ, ուրկէ հրաշանման դէպքով մը քանի մը շաբաթ առաջ ձեռք հոսած էր: Սակայն մեր հիասթափութիւնն ու զարմանքը մեծ եղաւ երբ իմացանք, թէ 24 Ապրիլի առաւօտուն եկեղեցիին դռները փակ են, որովհետեւ Բերիոյ թեմի առաջնորդն ու եկեղեցւոյ քահանայ հայրերը զացած էին Հալէպի Ազգային գերեզմանատուն, Մեծ Եղեռնի զոհերու յուշակոթողին առջեւ հոգեհանգստեան պաշտօն կատարելու համար: Լաւ կ'ըլլայ, որ եկեղեցւոյ սպասարկողներէն զոնք մէկը այդ օր ներկայ ըլլալ եկեղեցին եւ անոր դուռը բաց մնար, որպէսզի մանաւանդ դուրսէն եկած ուխտաւորները հոն այցելելու հնարաւորութիւնը ունենային: Ինչեւէ, յուսանք այսպիսի պարագաները յառաջիկային նկատի կ'առնուին:

Գրող, հրապարակագիր, լրագրող եւ անուանի «Նայիրի» շաբաթաթերթի հիմնադիր ու խմբագիր Անդրանիկ Ծառուկեանի եւ այլոց կողմէ «Երազային» նկատուած Հալէպի մէջ քանի մը ժամ անցընելէ ետք, յետմիջօրէի ժամը 2:00-ի շուրջ ճամբայ ելանք դէպի Տեր Չօր: Արդէն այս առաջին քայլը կարծես բաւարար եղաւ, որ երկրագնացութիւն, որոշ վայր մը եւ լրջութիւն տիրեալ անձնապէս մեր, ինչպէս նաեւ զոյգ օթոպիսներուն մէջ գտնուող մեր հայրենակիցներուն վրայ:

Արեւը նոր սկսած էր մար մտնել, երբ սկսանք մօտենալ Տեր Չօրի շրջանին: Աստուած իմ, այս ի՞նչ վախազոյն եւ շունչ կըտ-

րող տեսարաններ: Այդ տեսածին չափ աւագի տարածութիւններ՝ դաշտ, բլուր թէ քարացած աւազակոյտեր: Առաջին մտածումս այն եղաւ, որ թուրքերը իսկապէս գիտցած են ուր տանիլ իրենց (հայ) զոհերը, հոն գտնուելու մտաբանելու:



Տեր Չօրի Հայ Առաքելական Նահատակաց եկեղեցիին գլխաւոր դարպասը

համար: Նոյնիսկ եթէ զոհը օգնութեան ամենադոյզն յոյսով կանչ արձակէ, ո՛չ լսող եւ ո՛չ ալ տեսնող կ'ըլլայ զինք: «Վարպետ» թուրքերը վարպետօրէն ընտրած են եաթաղանի վայրը՝ այդ անխօս ու լուռ աւագի դաշտերը:

Գրեթէ մթնցած էր, երբ մօտ 22 ժամ տեսած ճամբորդութենէ մը ետք (ներառեալ սահմանին վրայ եւ Հալէպի մէջ կանգառները) մտանք «անապատի հարս» յորջորջուած Տեր Չօր քաղաքը: Ամսիջապէս խոստովանիմ, որ այդ քաղաքը կ'երեւակայի իբրեւ գիւղ, փոշիներու մէջ թաղուած եւ ցեխոտ ճամբաներով: Բայց, իրականութիւնը նշելու համար, զոնք քաղաքին մեր տեսած ու այցելած վայրերը շատ մաքուր էին, մանաւանդ մեր իջեւանած զոյգ պանդոկներուն յարակից ճամբաները եւ մօտակայ Եփրատ գետի կողքին թորնիշը:

Մեր իջեւանած պանդոկին՝ «Չիատ»-ի ճիշդ կողքին կը գտնուի Հայոց Նահատակաց եկեղեցին: Անոր հայ պահակը, իմա-նալով մեր գալուստը, անմիջապէս բացաւ եկեղեցւոյ արտաքին



Նահատակաց եկեղեցիին ներքեւ գտնուող թանգարան-ցուցարանը

դարպասը, մեզ իրաւորելով ներս: Մինչեւ պանդոկին մուտքի անհրաժեշտ արձանագրութիւնները կատարուելը, եկեղեցիի մտնելով մեզմէ շատեր մով մը վառեցին եւ աղօթեցին թէ՛ մեր Նահատակներու հոգիին համար եւ թէ՛ ընծեռնուած ուխտագնացութեան առիթին համար: Նշենք, որ օթոպիսին մէջ մեր կողքին աթոռներուն վրայ նստած ամուլի մը կնոջ 6-րդ այցելութիւնը կ'ըլլայ այս: Ապա իւրաքանչիւրը անցաւ պանդոկի իր առանձնասենեակը, հանգիստի համար:

Նոյն օրը (24 Ապրիլ) գիշերուան ժամը 10:00-ին, Լիբանանէն ժամանած ուխտաւորները, համաձայն պատրաստուած եւ յայտարարուած յայտագրի, ներկայ գտնուեցան երկրորդ պանդոկին՝ «Սայիտ»-ի սրահին մէջ սարքուած ընթերցան, տեղացիներու մասնակցութեամբ: Կային նաեւ տեղացի զոյգ երգիչներ, որոնք իմանալով մեր հայ ըլլալը, երգի մը բառերը փոխելով բարի գալուստ մաղթեցին հայ եղբայրներուն: Սակայն, ցաւալին, զոնք մեզի համար, մեր հետ եկած «ուխտաւորներ»-էն ոմանք, իգական սեռի պատկանող, կարծես մոռցած էին որ իրենք «Ապրիլ 24»-ի առիթով Տեր Չօր կը գտնուին եւ ոչ թէ «պարահանուէր»-ի մը ներկայ գտնուելու համար: Նոյն գիշերը, յաջորդ՝ Շաբաթ եւ Կիրակի օրերուն, անոնցմէ ոմանք բազմեռանգ մագզոյն, գոյնզգոյն հագուստներով, բաց վիզով, անթեւ շապիկներով եւ նոյնիսկ կիսաբաց կուրծքերով (թող ներքէն մեզի մեր Նահատակները) ներկայ գտնուեցան ընթերցան: Անոնցմէ ոմանք կ'արձակէին զոգրիչ ու զոհեղի խնդրանքներ եւ անվայել արտայայտութիւններ: Տակաւին այդ մարդ մը (պիտի չըսենք թէ ո՞ր խումբին հետ եկած էր ան) սիկարով, ծափերով եւ պարերով «մասնակից» դարձաւ տեղացիներու իրախճանքին, նկարելով երգիչները եւ սրահը: Համեստաբար կը խնդրէր Լիբանանի եւ Բերիոյ թեմերու առաջնորդներէն, որ թէ՛ իրենց քարոզներով եւ թէ՛ եկեղեցիներու քահանաներուն ճամբով յորդորեն եւ խրատեն այդպիսիները, որպէսզի զոնք այսպիսի առիթներով ինչպէս իրենց մարմիններուն ցուցադրութիւնը եւ ցոյց տրուած ոչ-տեղին խանդավառութիւնը: Նոյն տեսարանները կրկնուեցան Շաբաթ երեկոյեան Եփրատի կողքին գտնուող ճաշարանի մը մէջ ընթերցան եւ Կիրակի կէսօրէն ետք Թըւմորի ճաշարաններէն մէկուն մէջ կայացած ճաշկերոյթին ժամանակ: Մենք, անոնց անունով, մեզայ կը խնդրէնք մանաւանդ մեր Նահատակներէն եւ մեր ազգէն:

Կիրակի, 26 Ապրիլի առաւօտուն, կանուխէն արթնցանք պանդոկի Ա. յարկին վրայ գտնուող մեր սենեակի պատուհանէն լսելով եռուզեռի ձայներ: Դուրս նայելով, տեսանք բազմատասնեակ անձեր՝ սկաւառներ, արեւոյշներ եւ քաղաքացիներ, որոնք նոր ժամանած էին Հալէպէն, ներառեալ սկաւառական փողերախումբ մը, որ պաշտօնական քայլերգով դիմաւորեց Բերիոյ թեմի առաջնորդը, երկու վարդապետներ եւ երկու քահանաներ, որոնք, նախորդ գիշեր հսկումի արարողութիւն կատարելէն ետք եկեղեցիին մէջ, Կիրակի օր Ս. պատարագ եւ հոգեհանգիստի արարողութիւն պիտի կատարէին: Շեփորախումբը, առաջնորդի ժամանումէն առաջ եւ ետք հայրենասի-

րական եւ խանդավառ նուագով ճոխացուց մթնոլորտը, դուրսէն եկած թէ տեղացի քաղաքացիներու ներկայութեամբ:

Ուխտագնացութեան մասնակիցները Շաբաթ կէսօրէն առաջ ճամբայ ելան դէպի հայոց Գողգոթայի խորհրդանշի՝ Մարկատ, որ կը գտնուի Տեր Չօրէն շուրջ 85 քիլոմէթր հեռաւորութեան վրայ: Երթը տեւեց անելի քան մէկ ժամ: Ծամբան, որքան կը մօտենայինք Մարկատին, կ'ունենայինք (նոյն) վախազդեցիկ զգացումները. ճամբուն երկու կողմերը անապատային տարածութիւններ, 10-15 վայրկեանը մէկ անցնող ինքնաշարժ մը: Իսկապէս սարսափելի: Կրկնաւ ըսել, որ մեզմէ շատեր, նոյնիսկ այս օրերուն եւ ցերեկ աչքով, պիտի չփափաքէին անցիլ այդ ճամբայէն:

Ամէն պարագայի, երբ հասանք Մարկատի հայկական մատուռին վայրը, ուխտաւորները սկսան հետիոտն յառաջանալ հոն, ոմանք խաչակնքելով, ոմանք աղօթելով, բայց բոլորն ալ երկրագնացութեամբ: Մատուռին արաբ պահակը անմիջապէս բացաւ դարպասը եւ բոլորս մտանք անկէ ներս: Շուտով հոն ժամանեցին ապահովութեան երկու տարրեր, հսկելու համար ապահովութեան: Մատուռն ուրիշի պատերուն եւ ցանկապատին վրայ թէ մօտերը կային հայերէն եւ արաբերէն լեզուներով գրութիւններ՝ աղօթք, շնորհակալական խօսքեր ուղղուած՝ տեղացի արաբ ասպնջական ժողովուրդին, եւ ազդեցիկ խօսքեր: Մատուռ մտնելով, ներկաները մտմբ վառեցին եւ հաւաքական «Տեր ողորմեա»-ով հոգիներու հանգիստ խնդրեցին մեր Նահատակներուն համար: Մատուռին մէջ, ապակեայ վանդակներու մէջ ինամքով շարուած էին մեր մեծ հայրերուն եւ մեծ մայրերուն աճիւններէն նմոյշներ:



Ինչ գեղեցիկ ու հանդարտ է Եփրատ գետը քաղաքին մէջ, սակայն...

Ապա, մատուռէն դուրս, սկսաւ մարդկային ոսկորներ հաւքելու արշաւը, բարձրանալով մինչեւ մօտակայ բլուրը: Ես ալ ունեցայ ավի մը ոսկորի բեկորներ, որոնց մէջ կար նոյնիսկ ակռայ մը: Կրկին աղօթելով, հոգեհանգիստի խնդրանքով, բարձրացանք օթոպիսները եւ վերադարձանք Տեր Չօր, ուր մասնակցեցանք եկեղեցական արարողութեան:

Նշենք, որ Նահատակաց եկեղեցիին տակը կայ շատ կոկիկ եւ ներկայական թանգարան-ցուցարան մը, ուր այցելուները կրնան տեսնել Հայոց Յեղասպանութեան վերաբերող նկարներ, գիրքեր, քարտէսներ, այլ իրեր, մատուցներ եւ անշուշտ տարբեր ցուցափեղկերու մէջ գետնուած մարդկային զանկեր եւ ոսկորներ: Եկեղեցիի շրջափակին մէջ կան ներկայական ձեւով պատրաստուած յուշակոթողներու կրկնօրինակներ՝ Էջմիածնի, Անթիլիասի, Հալէպի եւ Դամասկոսի յուշակոթողներուն օրինակով: Կայ նաեւ քարակերտ կրակարանը, որուն մէջի կրակը անմար կը մնայ:

Տեր Չօր ժամանելէն ետք եւ մեկնելէ առաջ, նշմարեցի հայութեան եւ հայերու հետ կապուած անուններ եւ վայրեր: Օրինակ, եկեղեցիի կողքին, անկիւնի վրայ կայ մարգական հանդերձանք վաճառող խանութ մը, որուն ցուցանակին վրայ, Ատիտաս վաճառանիշին կողքին արաբերէնով գրուած է «Ապու հաչիկ»: Իսկ քիչ մը անդին, կայ «Մեթր Մարալ Սարգիսեան»-ի գրասենեակը:

Նաեւ պետք է նշել, որ տեղացիներէն շատեր տեղեակ են հայերու այցելութեան եւ անոր նպատակին մասին: Երբ տեղացի մը հարցուցիք պանդոկ առաջնորդող ճամբուն մասին, ան բացատրելի ետք ըսաւ. «Դուք մեր հայ հիւրերն եք, չէ՞»:

Իսկ Եփրատ գետի մասին ինչ ըսել: Քաղաքին մէջ, մանաւանդ նշանաւոր «կախալ կամուրջ»-ի երկու կողմերուն վրայ, Եփրատը շատ գեղեցիկ եւ հանդարտ տեսարաններով կը պարզուի: Սակայն այդ գետը, քաղաքէն դուրս, լուր վկայ եղած է մեր ժողովուրդի սպանութեան ու կոտորածին: Տեր Չօրէն դուրս, Եփրատ գետը, 1915-ին եւ յաջորդող տարիներուն, ներկուած է հայերուն կարմիր արիւնով եւ ողորուած է հայ կոյս աղջիկներուն մարմիններով, որոնք իրենք զիրենք Եփրատ գետը նետեցին թուրքերուն ձեռքը չիլնալու եւ պղծումի թէ այլ արարքներու չեղարկուելու նպատակներով:

Կիրակի կէսօրէն ետք, Տեր Չօր-Թըւմոր-Հոմս-սահման ճամբով վերադարձանք Լիբանան, շուրջ 75 ժամ տեսած ուղեւորութենէ մը ետք, ձեւով մը թեթեւցած, որ մեր ազգային նուագազոյն պարտականութիւնը կատարեցինք մեր Նահատակներուն նկատմամբ:

Երազակելէ առաջ մեր գրութիւնը այս ուխտագնացութեան մասին, պիտի ուզէի, համեստաբար, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսէն, Բերիոյ եւ Լիբանանի թեմերու առաջնորդներէն եւ ազգային ու քաղաքական ղեկավարներէն խնդրել, որ ինծի ներքին նոր նշանաբանով մը ներկայանալու մեր հայրենակիցներուն: Այս գաղափարը ունեցայ հազիւ Տեր Չօր հասած, եւ յաճախ կրկնեցի վերադարձէն ետք: Ուրեմն մեր նշանաբանն է՝ «100 ՏՈԿՈՍՈՎ ՀԱՅ» ԸԼԼԱԼՈՒ ՆԱԽԱԴՊԱՅՄԱՆ՝ ՏԵՐ ՉՕՐ ԵՒ ՄԱՐԿԱՏԵ ԱՅՑԵԼԵԼ ԱՆՊԱՅՄԱՆ

Սիրելի հայրենակիցներ, հայորդիներ, հարազատներ եւ բարեկամներ, անպայման զացեք Տեր Չօր եւ Մարկատ: Ան որ առողջական թէ այլ արգելք չունի, անպայման մէկ անգամ պետք է այցելել հոն, ուր հայ Նահատակներուն աճիւնները կը սպասեն: Գացեք Տեր Չօր եւ Մարկատ, աղօթեցեք մեր Նահատակներուն հոգիներուն համար, վերանորոգեցեք ձեր ուխտը մեր արդար դատին նկատմամբ: Հոն պետք է երթանք ոչ միայն Լիբանանի եւ Սուրիոյ, այլեւ Սփիւռքի տարբեր գաղթածախներու եւ մանաւանդ Հայաստանի մեր հայրենակիցները: